| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840 + տող 2850 + տող 2860), այդ թվում | | 50.0 | 50.0 | 0. |
| 2820 | 8 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ, որից | | 50.0 | 50.0 | 0. |
| 2823 | 8 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | | 0.0 | 0.0 | 0. |
| 2824 | 8 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | | 50.0 | 50.0 | 0. |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 50.0 | 50.0 | 0. |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050 + տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում | | 300.0 | 300.0 | 0. |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից | | 300.0 | 300.0 | 0. |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | | 300.0 | 300.0 | 0. |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 300.0 | 300.0 | 0. |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում | | 0.0 | 0.0 | 0. |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից | | 0.0 | 0.0 | 0. |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | 0.0 | 0.0 | 0. |
| | | | | - Պահուստային միջոցներ (վարչական բյ.) | 4891 | 0.0 | 0.0 | 0. |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 դեկտեմբերի 2017թվականի N 45-Ա

## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղադիր համայնքի ղեկավարի 2018 թվականի ամսական վարձատրության չափը սահմանել 260000/երկու հարյուր վաթսուն հազար/դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 16-ի«Գեղադիր համայնքի ղեկավարի 2017թվականի վարձատրության չափը սահմանելու մասին»N50-Ա որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2017թվականի N 46-Ա

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է՝

1.2018թվականի համար հաստատել Կոտայքի մարզի Գեղադիր համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 16-ի<<Կոտայքի մարզի Գեղադիր գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը.հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>N51-Ա որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հաստատված
Գեղադիր համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 12-ի N 46 -Ա որոշմամբ

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
# ԳԵՂԱԴԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2018Թ.

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչա | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 260000 | | | 260000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 180000 | | | 180000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 165000 | | 16500 | 181500 |
| 5 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 160000 | | 16000 | 176000 |
| 6 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 100000 | | 10000 | 110000 |
| 7 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 72800 | | | 72800 |
| | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 72800 | | | 72800 |
| | Ընդամենը | 7 | | | 7 | 1010600 | | 42500 | 1053100 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 դեկտեմբերի 2017թվականի N 47-Ա

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի նիստերի ժամանակացույցը համաձայն հավելվածի:

2.Անհրաժեշտության դեպքում անցկացնել արտահերթ նիստեր:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Գեղադիր համայնքի ավագանու 2017թ
դեկտեմբերի 12-ի N 47-Ն որոշման

## Գեղադիր համայնքի2018թ. ավագանու նիստերի ժամանակացույց

| Ամիսը | Համայնքի ավագանու նիստի օրը | Համայնքի ավագանու նիստի օրակարգային հարցեր | |
|---|---|---|---|
| Հունվար | 15-ին | Համայնքի բյուջեի 2017թվականի 4-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| | | Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին | |
| | | Համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին | |
| մարտ | 12-ին | Համայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն | |
| Ապրիլ | 13-ին | Համայնքի 2018թվականի բյուջեի 1-ին եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Հունիս | 11-ին | Համաձայնություն հողային հաշվեկշռին | |
| Հուլիս | 13-ին | Բյուջեի 2-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| սեպտեմբեր | 12-ին | Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում համայնքի տարածական զարգացման ուղղությամբ օրենքով վերապահված լիզորությունների իրականացման մասին | |
| Հոկտեմբեր | 12-ին | Համայնքի բյուջեի 3-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Դեկտեմբեր | 12-ին | Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին | |
| | | Համայնքի ղեկավարի 2019թվականի վարձատրության չափի մասին | |
| | | Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին | |
| | | Հաջորդ տարվա բյուջեի հաստատում | |
| | | Համայնքի համայնքի 2019թ. ավագանու նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 դեկտեմբերի 2017թվականի N 48-Ն

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և<<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ,8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ հոդվածների դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է

1.Սահմանել 2018թվականի համար Գեղադիր համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սահմանել 2018 թվականի համար Գեղադիր համայնքում տեղական վճարների դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1
Գեղադիր համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 12-ի N 48-Ն որոշման

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. *Գեղադիր համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.*

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ.սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ,

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ

կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի կետի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3)համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.

5)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6)համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար վեց հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար վեց հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար դրամ.

8)իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9)համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին

(սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10)համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

11)ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար դրամ,

բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

գ.սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ.այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

ե.դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12)համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման,

ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15)համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա.3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

2.Սույն հավելվածի 1-ին կետի 7-րդ , 10-րդ, 11-րդ,13-րդ ենթակետերում դրույքաչափերը հաշվարկվել են 0,5 գործակցի և 1-ին կետի 4-րդ ենթակետում՝ 0.75 գործակցի կիրառմամբ:

Հավելված 1
Գեղաղիր համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 12-ի N 48-Ն որոշման

2. *Գեղաղիր համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը*

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու,օտարելու դեպքերում անհրաժեշտ չափագրական,փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հիսունհինգ հազար դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 դեկտեմբերի 2017թվականի N 49-Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Գեղադիր համայնքի վարչական տարածքում նոր հասցեների տրամադրման ծառայության վճար՝ 5 000/հինգ հազար/դրամ.

2.Սահմանել համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար՝ 20 000/ քսան հազար/դրամ:

3.Սահմանել համայնքապետարանի աշխատակազմի կողմից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ծառայության վճար՝ 500 /հինգ հարյուր/դրամ:

4.Սահմանել Գեղադիր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման և օգտագործման տրամադրման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար՝10 000/տաս հազար/ դրամ:

5.Սահմանել համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցների օրինականացման ծառայության վճար՝5 000/հինգ հազար/դրամ:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 դեկտեմբերի 2017թվականի N 50-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 20-րդ կետի <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածի՝համայնքի ավագանին որոշում է.

1.2018 թվականի համար սահմանել Գեղադիր համայնքում աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարների դրույքաչափերը:
2.)կենցաղային աղբի համար `ըստ հաշվառված անձանց քանակի՝համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 150 /հարյուր հիսուն/ դրամ
2)ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝մեկ խորանարդ մետր աղբի համար 3000/երեք հազար/ դրամ,ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000/տաս հազար/ դրամ:
2.Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում,այդ թվում տեխնիկական,աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝
1)առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մեկ քառ մետրը 50 /հիսուն/դրամ
2)հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ իրականացնող օբյեկտներ մեկ քառ.մետրը 20/քսան/ դրամ
3)արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ մեկ քառ. մետրը 5 /հինգ/դրամ

4)կրթական մշակութային,առողջապահական.սպորտային,գիտահետազոտական շինությունների մեկ քառ.մետրը 3/երեք/ դրամ:
5)Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճար սահմանել 600/վեց հարյուր /դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ